

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ  
ՆՈՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ՀԱՅՆԵՆՈՒՄ

Ռ. Ն. ՇԱՆՈՒՆՑ

Էկզզվի քառապաշարը հարստանում է նոր բառերի, իմաստների, կա-  
յուն կապակցությունների և դարձվածքների համալրման հաշվին: Բառային  
համակարգը լեզվի ակնհայտարժու և ճկուն մասն է, քանի որ այն հասա-  
րակական կյանքում տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխություն, ցանկա-  
ցած նորույթ արագ արտացոլում է իր քառապաշարում:

1985 թ. Խորհրդային Միությունում, ինչպես նաև առանձին հանրապե-  
տություններում կառավարող քաղաքական վերափոխումները, ազգային և  
հասարակական շարժումներն իրենց հետ բերեցին նոր հասկացություններ,  
հետևապես նաև նոր անվանումներ՝ նպաստելով զրակա հայերենի հարքս-  
տացմանը: Լեզվի ներքին հնարավորությունների օգտագործման, պատճե-  
նումների ճանապարհով առաջացան շատ նորաբանություններ, որոնք, ան-  
միջապես արտացոլելով զանգվածային լրատվության լեզվում, արագ քա-  
ղաքացիություն ստացան:

1988 թ. փետրվարին՝ սկսված արցախյան շարժումը ուղեկցվեց տար-  
բեր կառուցվածք և բովանդակություն ունեցող նորաբանություններով:  
Դրանցից շատերը հասարակական-քաղաքական տերմիններ են և թեև ա-  
ռաջացել են արտալեզվաբանական գործոնների ազդեցությամբ, բայց ի  
տարբերություն վերջին տասնամյակների այդ ոլորտին պատկանող նորա-  
գույն շատ տերմինների, պատճենումներ և աղատ թարգմանություններ չեն,  
չեն առաջացել այլ լեզուների ազդեցությամբ և կրում են խիստ ազդային  
բնույթ: Այդ տերմինների մի մասը թեև առաջացել է հայ ժողովրդի համար  
տվյալ ժամանակահատվածում հասարակական-քաղաքական կարևոր նշա-  
նակություն ունեցող հասկացությունների համապատասխան և միանգա-  
մայն նոր է, բայց հաճախակի գործածվելով հասարակության ամենալայն  
շրջաններում՝ արագ դուրս գալիս է նորաբանություն լինելուց:

Ոչոք բառեր ընդարձակել են իրենց գործածության ոլորտները՝ ձեռք  
բերելով ռեալական-գործառական նրբերանգներ կամ հակառակը՝ կորցրել են  
դրանք: Այսպես, ընտրաբաժնի և քաղաքացի տերմինները, որոնք հասարա-  
կական-քաղաքական բովանդակություն ունեն և գործածական էին միայն  
արևմտահայ զրական տարբերակում, կիրառվեցին նաև արևելահայերենում:  
Դասադավը, որն ըմբռնվում էր որպես հնազաժ և միայն արտասահմանյան  
երկրներին բնորոշ երևույթ<sup>1</sup>, ընդարձակեց իմաստային սահմանները՝ ըմ-  
բռնվելով իբրև ընդհանրապես բողոքի ձև՝ անկախ տարածքային սահման-  
ներից կամ քաղաքական համակարգից և դարձավ սովորական, գործածա-  
կան հայերենի բոլոր ոլորտներում: Միանգամայն նոր կազմություն է ջրա-  
դավը, որն առաջացել է դասադավ և ճացադավ տերմինների համաբանու-  
թյամբ: Ժողովրդավարություն տերմինը, որը մեր քառաբաններում տրվում  
է անհամապատասխան նշանակությամբ, դարձավ լայն գործածական և դուրս  
մղեց դեմոկրատիա օտար համարժեքը: Քիսկական ժողովրդավարությունը միշտ  
էլ ենթադրում է ցանկադաժ ղեկավարին փոխելու հնարավորություն» (ԾԾ,  
20, 2, 1991):

Ազգային պայքարի պոռթկման անմիջական ազդեցությամբ հայերենի  
քառակազմական համակարգը համալրվեց մի շարք նորակազմություննե-

<sup>1</sup> ՏՃ՝ է. Աղայան, Արդի հայերենի քառաբանական քառաբան, Երևան, 1976:

դույն, Բողոքի միտինգ և բողոքի ցույց կապակցությունների կողքին ստեղծվեց նաև նստացույց տեքստիլը, որը շատ արագ ընդունվեց հասարակության կողմից, քաղաքացիություն ստացավ՝ կիրառվելով գրավոր խոսքում, այդ թվում նաև զանգվածային լրատվության միջոցների լեզվում։ «Հրապարակում վակցված պաստառներին զրված են։ Անընդհատ նստացույց մինչև հավաստիացում», «Վերջապես հնարավոր է մոտենալ արդեն երկու շաբաթ շարունակ նստացույց կատարող ուսանողներին։ Աղբիկս նստացույցի մասնակիցների մեջ է» (ՄԶ, 7. VI. 1988), նստացույց տեքստիլից-արագ վերջածանցով կաղավղեց նստացուցաբար նոր բառը, որը համեմատաբար սակավ գործածովությունն է։

Հնդափոխական վերափոխումների և ժողովրդավարական գաղափարներով ոգեշնչված արցախյան շարժումը, որը մեծ իրադարձություն էր և արագ արձագանք գտավ ամբողջ աշխարհում, չէր կարող չդառնալ այնպիսի նորաբանությունների աղբյուր, որոնցից շատերն ունեն գնահատողական երանդ կամ ռճական գունավորում: Արտալիքավաբանական գործոններով պայմանավորված նորաբանությունների առաջացման այդ գործընթացը կապվում է նաև լեզվի ներքին աղբյակների ակտիվ դերի և դրանց փոխգործողության հետ:

60-ական՝ թվականներին, երբ Հայաստանը, ինչպես նաև Միության մնացած հանրապետությունները, աստիճանաբար մխրճվել էր սուլավյան, բրեժնևյան քաղաքականության ճահիճը, չեզվում դեռևս եզակի էին տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գնահատողական բառեր ու կապակցություններ, Հս.մատողավրդական պոռթկումը չէր կարող դրական արձագանք չգրտնել հասարակության մեջ և թշնամական վերաբերմունքի շարժանանալ վերին իշխանությունների, ինչպես նաև դեռևս հին ավանդույթներով առաջնորդվող ժամանակի կենտրոնական զանգվածային լրատվության միջոցների կողմից, որոնք միևնույն հասկացությունը բնորոշեցին գնահատողական տարբեր անվանումներով:

Հայերենում առկա է հասարակական-քաղաքական տերմինաբանության ոլորտում բառակազմական ակտիվ դեր ունեցող շարժում գոյականը, որից վերջին տասնամյակներում գործածվում են մի շարք անվանական նյապակ-ցութայիններ, որոնք հիմնականում պատճենումներ են ռուսաց լեզվից, ինչ-պես՝ կառավարչական շարժում, հակառազմական ջլաժժում, հայկապաշտպանական շարժում, հակաեվրոպական շարժում և այլն:

Կարծրացած բյուրոկրատիայի համար ղարաբաղյան պայքարը խորթ էր ու վտանգավոր, ուստի և այն բնութագրվեց զնահատողական-բացասական երանգով, դրանք են՝ ծայրահեղականները շարժում, մի խումբ էֆեմեր-միկսալների շարժում արտահայտությունները, որոնք սովորական զնահատողական որակումներ էին, շարահյուսական ազատ կապակցություններ, ժողովրդավարական առաջավոր ուժերի կողմից այդ պայքարին տրվեց կոնկրետ անվանում՝ նկատի ունենալով նրան համապատասխանող նոր առաջացած բուն հակացությունը։ Այս նորի անվանումների հիմքում դրվեց հատկապես երկու կարևոր կողմ՝ շարժման ազդային և աշխարհադրական անկախությունը և լրական-զնահատողական հատկանիշը։ Ակտիվորեն կիրառվեցին ու կայունացան լատարադյուն շարժում, ղարաբաղյան արդար շարժում, արցախյան շարժում, հայտն համազգային շարժում կապակցությունները։ Սրանցից իբրև բացարձակ նույնիմաստ տերմիններ գործածական են դասախառնյալ շարժում և արցախյան շարժում կապակցությունները։

Զանգվածային լրատվության միջոցների լեզվում (ինչպես նաև հրապարակային բանավոր ելույթներում, հանրահավաքներում) հավասարապես կիրառվում են երկուսն էլ. «Մեր ժողովրդի այն պոռթկումը, որը կընթկնե «Պաշտպանության շնորհում» տնտեսով... կնմանի Ավարայրի ճակատամարտը, Սարգսրապատյան հերոսամարտը և... չափահաս բախտորոշ հեղաթեկումները» (ԵՃ, 29. X. 1989), «Ինչ տեղ ենք աշխատում աղցախլան շարժ-

վանդ վերակառուցման միջոցով, Այո՛, արցախյան շարժման ներկա էտապը համընկավ վերակառուցման հաստատման ընթացքի դժվար շրջանին», «Այս օրերին, երբ արցախյան շարժումը վերածել է համազգային շարժման, ինստիտուտի գոյությունն անհրաժեշտ է և կենսական պահանջ» (ՍՀ, 3. XI. 1988):

Արցախի համար մղվող պայքարը իրոք համազգային է, գրան ակտիվորեն մասնակցում են հասարակության ամենատարբեր խավերը: Պայքարի առաջին փուլում այն ուղեկցվում էր զանգվածային երթերով, գործադուլներով, հանրահավաքներով: Շարժման կուլմնակիցները ելնում էին իրենց պահանջների օրինականությունից: Այսպես ստեղծվեց ժամանակակից գրական հայերենի համար շատ արտադրողական կադապարներից մեկով՝ համադաս բաղադրիչներով կազմված պանանջ-շարժում բարդություններ. «...համաժողովրդական ծայրածայր սահմանադրական, բացարձակապես արդարացի պանանջ-շարժում... հակադեմոկրատիկ առաջ բերեց Ադրբեյջանում», «Ո՛չ կենսային Ղարաբաղի պրոբլեմն է նորություն, ո՛չ սում-գայիթյան դժոխքի նախաքավարանը, ո՛չ «նրա շուրջ» ծավալված կրքերն ու խաղերը, որոնց նպատակը մեկն է՝ փորձել սքողել ճշմարտությունը, կիսատպառտությունը վարագուրել թե՛ համաժողովրդական արդարացի պանանջ-շարժումը, թե՛ ողբերգությունը» (ՆՆ, 27. XII. 1988):

1988 թ. փետրվարի 28-ին կատարվեց սումգայիթյան ոճրագործությունը: Քաղաքակրթության ժամանակներում նմանը չեղած ոճրագործությունը անվանվեց զուգահեռաբար գործածվող մի շարք կապակցություններով, որոնք շատ արագ կայունացան: Ադրբեյջանական Սումգայիթ քաղաքի անունից յան ածականակերտ վերջածանցով բառամաստային և հասկացական միևնույն խմբի պատկանող ոճրագործություն, ջարդ, ցեղասպանություն, եղեռն, ողբերգություն, կոտորած, նախնի գոյականներից կազմվեցին կապակցություններ, որոնք շարունակում են կիրառվել զուգահեռաբար: Դրանք չլինելով գիտության նեղ ոլորտի պատկանող բառեր, այլ՝ հասարակության բոլոր խավերի համար հասկանալի և հասարակական-քաղաքական կարևորագույն էջանակություն ունեցող հասկացության անվանումներ, ստեղծվեցին ոչ թե նեղ մասնագետների, այլ մտավորականության կողմից՝ հասարակության լայն խավերի ակտիվ մասնակցությամբ, այդ իսկ պատճառով դրսևորվեցին մի շարք զուգաձևություններով, որոնք անմիջապես արձանագրվեցին զանգվածային լրատվության միջոցների, հրապարակախոսության լեզվով: «Սումգայիթյան ճնշագործությունը քաղաքական գնահատական չստացավ» (ԳԹ, 10. 1989): «Ադրբեյջանի ղեկավարությունը ոչ միայն չկանխեց սումգայիթյան ցեղասպանությունը, այլ այն գործելուց հետո էլ չզադարեց քստմենթի ոճրագործությունը, անարգանքի սյունին չգամեց հանցավորներին» (ՀԶ, 17. XI. 1988): «Մութ ուժերը սումգայիթյան կոտորած սարքեցին» (ՆՆ, 27. X. 1988): «Հոկտեմբերի 28-ին վերսկսվեց սումգայիթյան ողբերգության մասնակիցների խմբերից մեկի դատավարությունը» (ՍՀ, 2. X. 1988): «Սումգայիթյան ողբերգության մեջ շատ չլուծված հարցեր կան» (ՍՀ, 27. X. 1988): «Մամուլը շարունակում է իր արշավանքը մեր դեմ, կարծես դեպքերը փոխվել են, կարծես մենք ենք սումգայիթյան ջարդերի հեղինակը»: «Քանի դեռ սումգայիթյան եղեռնը չի ստացել իր բուն որակումը, մենք չենք կարող մեր ժողովրդին հավատացնել, որ վերակառուցումը, դեմոկրատիան և հրապարակայնությունը դատարկ բառեր չեն» (ՆՆ, 24. X. 1988): «Պատահականություն էր արդյոք սումգայիթյան նախնիք» (ՍՀ, 21. XI. 1988):

Արցախցիների ինքնորոշման համար մղվող անզիջում պայքարը, երկրում տեղի ունեցող հեղափոխական վերափոխումները, հայ մտավորականության ճիշտ դիրքը բացահայտեցին զարաբաղյան շարժման բուն էությունը: Գազմվեցին և անմիջապես լայն գործածություն ստացան դառն-

բառերն նգնւում, Էսէկանայկաւա՛ն աբշավ, հակահայկաւա՛ն ձիւտերբա, խորհողառու բյուռակրատիա նորագույն կապակցութիւնները:

80-ական թվականներին հայերենի բառակազմական ներքին հնարավորութիւններով ստեղծված, հազվագեղ գործածութիւն ունեցող մի շարք կապակցութիւններ ընդարձակեցին իրենց կիրառութիւն ոլորտները՝ դառնալով մասնույթ, հրապարակախոսութիւն ոճում հաճախակի գործածվող և հաւսարակութիւն լայն զանգվածներին հասկանալի տերմիններ: Դրանց մի մասը վերաբերում է հայ օղորդի տարածքային տարբեր հատվածների բնորոշմանը, ինչպես՝ ներքին սփյառւի, խորհրդային սփյառւի, աբտաբին սփյառւի: Սակայն խորհրդային Սիւրիան փլզումից հետո այս կապակցութիւնները, բնականաբար, պետք է դուրս դան գործածութիւնից՝ համապատասխան հասկացութիւնների վերացման հետ: Դրանք հիմնականում հանդիպում են 80-ական թվականների մամուլի էջերում (այժմ ավելի սակավ): Իրենց գործառութիւն ոլորտներն ընդարձակեցին նաև գնահատողական մի շարք կապակցութիւններ, որոնք անհրաժեշտ է արձանագրել համապատասխան բառարաններում՝ սպիտակ եղեռն, սպիտակ ցեղասպանութիւն, «...կարելի է տպագրել հատկապես ներքին սփյառւի՛ն այնքան անհրաժեշտ զրուցարաններ, քրեատմատիաներ, ճանաչողական-իմացական արժեք ներկայացնող գրքեր» (ԳԹ, 15. IX. 1989): «Մեր ժողովրդի ողբերգական ճակատագիրը պատճառ է դարձել թե՛ ներքին, թե՛ արտաքին սփյառւիների գոյութիւն» (ԽՂ, 21. X. 1989): «Ինչպես եք պատկերացնում Հայաստանի հետ խորհրդային սփյառւի միասնութիւնը»: «Այժմ մեր խնդիրն է՝ խորհրդային սփյառւի մեր եղբայրներին ու քույրերին ամեն կերպ և ամեն ինչով աջակցել» (ԾԾ, 28. XI. 1989): «Նա արվեստի ընձեռած միջոցներով բողոքում է նախնականում կատարված սպիտակ եղեռնի դեմ» (ԽՂ, 21. X. 1989): «...Պոլոնսկուն թվացել է, թե... նախնականի սպիտակ ցեղասպանութիւնից հետո, Սումգայիթից, խոջալուից հետո... վերստին կիրառելի կլինի համապարտ երաշխավորութիւնը» (ԾԾ, 21. XI. 1989):

Բառապաշարի համակարգում քիչ չեն այն նորաբանութիւնները, որոնք առաջացել են լեզվում առկա «հին» բառերի համաբանութիւնաբ և նույն կաղապարներով: Այդպիսի բառերի կազմութիւն համար հաճախ հիմք են ծառայում այն բարդութիւնները, որոնք կարելի է ստեղծել ընդհանուր բաղադրիչներով: Այսպիսի կազմութիւն ունեն վերջին ժամանակներս կազմված և զանգվածային լրատվութիւն լեզվում արդեն արձանագրված երիտադրբեջանցիներ և սակավ գործածութիւն ունեցող երիտհայեր քարդութիւնները, որոնք կիրառվում են քացասական-գնահատողական երանգով: Հայերենի հասարակական-քաղաքական տերմինահամակարգում առկա է երիտքուրքեր տերմինը, որը, ցավոք, չի արձանագրվել լույս տեսած բառարաններում: Հայտնի է, որ երիտքուրքեր անվանումը կապվում է անցյալ դարի վերջին թուրքական «Միութիւն և առաջադիմութիւն» ազգայնամուկական կուսակցութիւն անդամների՝ երիտասարդ թուրքերի հետ, որոնց գործունեութիւնն իր զագաթնակետին հասավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ խնամքով մշակված ժրգորով տեղահանվեց և սրի մատնվեց արևմտահայութիւնը: Իրականացավ մարդկային մեծագույն ոճրագործութիւններից մեկը՝ հայկական եղեռնը: Երիտքուրքեր քաղաքական տերմինի համաբանութիւնաբ ստեղծված երիտադրբեջանցիներ և երիտնայեր բառերը հաջող կազմութիւններ են և կարող են տարածվել, չմնալ սոսկ դիպվածային կիրառութիւնների սահմանում: «Երիտքուրքեր հանդես եկան ազատութիւն անունից և... անկշտում բորենու պես լափեցին հայ ժողովրդի ազատութիւն վերջին ժվեներ: Հիմա էլ «երիտադրբեջանցիները» ահա հանդես են գալիս իւտերնացիոնալիզմի անունից և վերջին ճիգով փորձում են պահել Արցախ աշխարհը: Հիմա էլ... «երիտադրբեջանցիները» ահա հանդես են գալիս վերակառուցման անունից» (ԽՂ, 7. X. 1989): «...Թող մենք մաքրվենք, ինքնակատարելագործվենք, աղատվենք երիտհա-

յեթից, որոնք շրջափակման ծանր պայմաններում անգամ փորձեցին հաղթանակել (հՀ, 26. X. 1989):

Առումնաբերություններ են նաև աղբյուրներում, աղբյուրներում և աղբյուրներում, որոնցից առաջինը ստեղծվել է հայերենի բառապաշարում առկա հայաբառի բառի համաբանությամբ. «...Հայաստանի աղբյուրներում հայաբառի բառի համաբանությամբ» (հՀ, 14. X. 1989): «...Ահա դարաբաղյան շարժման պատմությունը, որը խեղաթյուրվում, վարկաբեկվում և ճնշվում է...աղբյուրներում կենտրոնի կողմից» (ԳԹ, 9. II. 1989):

Բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից մեկում՝ իմաստային նորաբանություններով, որոնք ղրսեկորվում են լեզվում առկա «հին» բառերի նոր իմաստների ձեռք բերման հաշվին, նույնպես համալրվեց դրական հայերենը: Պետք է ասել, որ նոր իմաստներ կարող են առաջանալ նաև նախնականներից և անձնանուններից: Նման շատ բառերի առաջացման հիմքում կառուցվել են լեզվի տարբեր ֆունկցիոնալ փոխադրություններ: Այսպես, 1988 թ. հայերենի բառապաշարը համալրվում է սովետաշխարհի բառով, որը կիրառվում է շատ ոճերում: Աղբյուրների Սումգայիթ քաղաքի անունից առաջացած համանուն բառն այժմ նաև հասարակ գոյական է, նշանակում է ընդհանրապես ջարդ, կոտորած, այստեղից էլ՝ սովետաշխարհի սարժիկ դարձվածքը՝ կոտորած անել, ջարդ սարքել նշանակությամբ: Այն ձևավորվել է ոչ թե կապակցության քաղաքիչների մթագնման կամ վերաբնակեցության ման միջոցով, այլ՝ միանգամից՝ թարմ դեպքերի ազդեցությամբ: Ի դեպ, սովետաշխարհի հասարակ գոյականը 1988—89 թթ. ղանգվածային լրատվության միջոցների լեզվում ամենահաճախակի գործածական բառերից է. «Նշանակում է այն է, որ արդեն քանիներորդ անգամ բոլորին ահաբեկում են նոր սովետաշխարհի» (ԾԾ, 23. III. 1989): «Այնպես, որ սովետաշխարհի հետ լուծություն ոչ միայն վերափոխական է, այլև, հիրավի, հանցավոր» (հՀ, 5. XI. 1989): «Սովետաշխարհի իրավիճակի սրման լավագույն ապացույցն է» (ԾԾ, 2. XI. 1988): «Մոլեռանդության ակունքը ծնեց սովետաշխարհի» (ԾԾ, 18. XI. 1988): «Որքան ավելի ահավոր սովետաշխարհի կլինի անցած տարվա նոյեմբերին Բաքվում, Կիրովաբադում, Շամխորում, Նախիջևանում, եթե չմիջամտեր բանակը» (ԾԾ, 8. V. 1989): «...Հայտարարված ավազակային պատերազմ են սկսել Արցախի և Հայաստանի դեմ և բարբարոսաբար հարձակումներ են գործում հայկական բնակավայրի վրա, որ սպառնում են երկրորդ սովետաշխարհի» (ՀՀ, 26. XI. 1989): «Անցած 65 տարիներին լեռնային Ղարաբաղը ապրել է քողարկված ու բացահայտ մեծ ու փոքր բազում սովետաշխարհի», «Քաղաքակիրթ մարդկության պարտքն է դասեր քաղել անցյալից ու ներկայից... անել ամեն ինչ, որպեսզի այլևս սովետաշխարհի չկրկնվեն» (ԾԾ, 21. XI. 1988):

Վերջին շրջանում 1988—89 թվականներին կիրառվեցին և կառուցվեցին նաև ալիև, անմեղք, իմաստներով, ալիևյան, ալիև-կեռքիչովյան, Եստիմանյան բառերը, որոնցից յուրաքանչյուրի փոխաբերական իմաստներն արտացոլվեցին մամուլի և հրապարակախոսության լեզվում:

80-ական թվականների վերջերին գրավոր խոսքում հաճախ կարելի էր բացել զինվորական փոխաբերական (նաև զինվորական փոխաբերական) բառեր, որը թույլ տրվեց, բայց առավել գործածական է դարձել և կիրառվում է կեղծ գիտականությամբ, պատմությամբ խեղաթյուրման իմաստով: Գործածական են դարձել նաև բունիաթով, զինվորականությամբ, բունիաթովյան ձևերը. «Նորա շուրջը համախմբվեց զինվորական հետ ոչ մի առնչություն չունեցող զինվորականների մի խառնախումբ, ստեղծվեց այսպես կոչված «հաբունիաթովյան» պատմաշինական դպրոցը» (ԳԹ, 10. XI. 1989): «Հայագետների մի հոծ խումբ մամուլում մերկացրեց բունիաթովյան ստեղծ ու կեղծարարությունների, հարձակումների ու զրպարտությունների խայտառակ փունջը»: «Այն օրերին բունիաթովյան վայրահաշույնները դատա-

պարտեցին նաև խորհրդային շատ մտավորականներ» (ՀՀ, 30. XI. 1989): «Սվ բովիաթովները նստած տաքուկ առանձնասենյակներում պատմություն են զշինում» (ԽՀ, 1. XII. 1989):

1992 թ. մայիսին, երբ ազատագրվեց Շուշին, բացվեց Լաչինի սահմանագիծը՝ Հայաստանը Արցախին կապող ճանապարհը, և արցախցիներին օգնության հասան առաջին շարասյուները, հայերենում կիրառվեց նոր բառակապակցություն, որն անմիջապես կայունացավ և արձանագրվեց լրատվության լեզվում. դա «մարդասիրական միջանցք լիակապակցությունն է: Ներկայումս ամենագործածական բառակապակցություններից են արցախյան նիւնախարց և արցախյան ճիմնախնդիր զուգահեռ գործածություն ունեցող ձևերը:

Արցախյան և ժողովրդավարական շարժումները նպաստեցին մայրենի լեզվի մաքրությանը. դա դրսևորվեց մեր մտավորականներից շատերի, առաջավոր լրագրողների՝ լեզվի մաքրության նկատմամբ ցուցաբերած հոգատարությամբ և խնամքով: Հասարակական-քաղաքական օտար մի շարք տերմիններ արագ փոխարինվեցին բառակազմական ներքին հնարավորություններով կազմված հայերեն համարժեքներով, մի քանիսն էլ՝ արևմտահայերենում արդեն կիրառվող տարբերակներով, ինչպես՝ ճաշակագիր, ամբողջատիրություն, աշխարհատեսություն, հանրահալիք, հախարար, խորհրդագետ, խորհրդագիտություն, կարգախոս, կառուցողականություն, ստեղծիչ, ստեղծիչություն, տաճարամ և այլն: «Համաժողովն ընդունեց ճաշակագիր» (ՀՀ, 13. IX. 1989): «Այսօր մենք ունենք Անկախության ճաշակագիր» (ՀՀ, 7. V. 1991): «Արդեն որերորդ անգամ ռադիոյով հայտարարում են, որ ժամը 12-ին Մանեթնայա հրապարակում կայանալիք հանրահալիք տեղի կունենա Սպիտակ տան առջև» (ՀՀ, 29. VIII. 1991): «Վերջին իրադարձություններն արևև ազգամիջյան կոնֆլիկտներ չեն, այլ կոնֆլիկտ՝ ամբողջատիրության և ռամկավարության միջև» (Ա, 22. V. 1991): «Ղարաբաղյան շարժումը անակնկալ չէր... բայց թխվեց ու շրջանառության մեջ դրվեց «ում է ձեռնտու դա» պատճենային կարգախոսը» (ԵԵ, 28. IX. 1989) և այլն:

Տարածվել են նաև վերորերյալ, ինչպես նաև այլ ձևերից կազմված ածականական մի շարք կազմություններ, ինչպես՝ աշխարհատեսական, տնտեսագիտական, կառուցողական. «...կարող է ավելորդ լարվածություն առաջացնել միատարր Հայաստանը, որը միակն է... վտանգավոր աշխարհատեսական դիրքով» (Ա, 22. V. 1991): «1990 թ. օգոստոսին ժողովրդավարական ուժերի իշխանության գալուց հետո Գորբաչովը նրանց մենակ թողեց» (Ա, 22. V. 1991): «...Մենք պարզապես չենք կարող վերափոխել աշխարհատեսական կապերը» (ՄՀ, 9. XII. 1988): «...Ամբողջատիրական պետության հակամարդասիրական էությունն իրավաբանորեն կհաստատվի» (Ա, 28. II. 1991):

Արցախյան շարժման առնչվող նորարանությունների շարքում չնչին քանակ են կազմում փոխառյալ լիամ օտար կազմություն ունեցող քառերը: Դրանց կարելի է դասել երազի՝ երևանյան ադրբեջանցիներ (erazyl) և ալիեշիեա նորակադմությունները. «Բայց վերադարձնել Ալիևին, նշանակում է վերադարձնել ալիեշիեան՝ կլանի էնթամորը», «Իսկ չէ որ ալիեշիեայի այդքան դովերգած ժամանակներում չիղացված մնաց բնակարանների համար նախատեսված 440 միլիոն ռուբլի» (ԽՀ, 6. II. 1990): Օտար որոշ տերմինների հայերեն համարժեքները թեև արձանագրված են մեր բառարաններում, սակայն դրանցից շատերը գրեթե չեն գործածվում գրավոր և բանավոր խոսքում կամ ունեն կիրառության նեղ ոլորտ: Ժողովրդավարական շարժումների ազդեցությամբ դրանց մի մասը լայն գործածություն ստացավ, կազմվեցին ածանցավոր նոր ձևեր: Այդ կարգի տերմինների շարքը կարելի է դասել պիկետ բառի հայերեն համարժեքը՝ ուղեկալ, ուր հարստացավ քաղաքական նոր իմաստով և կայունացավ իբրև

տերմին: 85—90-ական թվականներին նրա գործածությունը քաղաքական իմաստով նպաստեց հասկանալի դառնալու ժողովրդական լայն զանգվածներին: Այն էիրառվում էր հրապարակային բանավոր ելույթներում, ուղիղ հեռուստատեսային հաղորդումներում, մամուլում: Ստեղծվեց և անմիջապես ընդունելություն հտավ Ծղեկալուրդ (պիկետիկ) նորակազմությունը. «Ուլեկալուրդները փակել են ճանապարհը» (ԾԾ, 26. II. 1990): «Քամին գետին է տապալել ուլեկալուրդների վրաններից մեկը» (ԾԾ, 27. II. 1990):

Հատին է, որ զանգվածային լրատվության շեղումն անընդհատ համալրվում է նաև լրագրական ստանդարտով: Սակայն իրենց բովանդակությամբ արցախյան շարժման հետ առնչվող նման կազմությունները եզակի են: Այդպիսի կազմություն կարելի է համարել «Լեռնային Ղարաբաղի և ճրա շուրջ» բազմաբաղադրիչ կապակցության և նրա ավելի կարճ տարբերակի՝ «ԼՂԻՄ-ի և ճրա շուրջ» արտահայտությունները, որոնք պատճենումներ են ուսերենից (Hagorный Карабах и вокруг него, HKAO и вокруг него) և հաճախակի էին գործածվում նախկին միութենական մամուլի էջերում, ուղիղի և հեռուստատեսության շեղվում:

Այս արտահայտությունները, որոնք ստեղծվել էին քաղաքացի օրենքներով առաջնորդվող այն անձանց կողմից, ովքեր Արցախի աղատ կամքի դրսևորումը տեսնում էին համընդհանուր փոփոխության մեջ, շմբդեցին հայերենին: Ավելին, արցախյան շարժում, դաժարադաժ շարժում, դաժարադաժ կոմֆլիկտ և «Լեռնային Ղարաբաղի և ճրա շուրջ», «ԼՂԻՄ-ի և ճրա շուրջ» կապակցությունները, որոնք այնքան հաճախ կիրառվում էին նախկին միութենական և հանրապետական զանգվածային լրատվության շեղվում, իրենց բովանդակությամբ միանշանակ չէին: Սրանցից երկրորդները հայերենում կիրառվում էին հեղանական նրբերանգով և զրավոր խոսքում առնվում չակերտների մեջ:

Այսպիսով, ազգային-ազատագրական պայքարի, արցախյան շարժման ազդեցությամբ զրական հայերենը համալրվեց մի շարք նորաբանություններով: Դրանցից շատերը հասարակական-քաղաքական տերմիններ են և թեև առաջացել են արտալեզվաբանական գործոնների ազդեցությամբ, բայց ի տարբերություն վերջին տասնամյակների այդ ոլորտին պատկանող նորաբանությունների, պատճենումներ և ազաս: Թարգմանություններ չեն: Դրանց շարքում կան և՛ նորակազմ բառեր ու կապակցություններ, և՛ իմաստային նորաբանություններ: Իրենց գործածության ոլորտներն ընդարձակել են մի շարք բառեր՝ կիրառվելով հասարակական-քաղաքական նոր բովանդակությամբ:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա—Ազգ

ԳԹ—Գրական թերթ

ԾԾ—Երեկոյան Երևան

ԽՀ—Խորհրդային Հայաստան

ԽՂ—Խորհրդային Ղարաբաղ

ՀԶ—Հայրենիքի ձայն

ՀՀ—Հայաստանի Հանրապետություն

ՍՀ—Սովետական Հայաստան

# ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ПРЕОБРАЗОВАНИЯ В ПОСЛЕДНИЕ ГОДЫ И НЕОЛОГИЗМЫ АРМЯНСКОГО ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА

Р. Н. ШАЛУНЦ

## Р е з ю м е

За последние годы под влиянием национально-освободительного арцахского движения армянский литературный язык обогатился рядом неологизмов. Многие из них—общественно-политические термины, которые хотя и возникли под влиянием экстралингвистических факторов, однако в отличие от неологизмов, относящихся к этой сфере за последние десятилетия, не являются ни кальками, ни свободным переводом. В их ряду имеются и новообразованные сложные слова и словосочетания, и семантические неологизмы. Сферу их употребления расширил ряд слов, используемых с новым общественно-политическим содержанием.